«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«31» օգոստոսի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 7 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն

Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 2 անդամ

1. Ասրյան Հենրիկ
2. Աղավելյան Տաթևիկ

Նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. Դպրոցի ներքին կարգապահական կանոններում կատարվող փոփոխությունների մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
4. Պակաս խտությամբ չորս 4-րդ դասարան ունենալու մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան:

Լսեցին 3. Դպրոցի ներքին կարգապահական կանոններում կատարվող փոփոխությունների մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը նշեց, որ նախորդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից սկսած դպրոցում կազմակերպվել են քննարկումներ՝ մանկավարժների, ծնողների

շրջանում, որը կապված են եղել դպրոցում 2023-2024 ուսումնական տարվանից սկսած աշակերտական համազգեստի սահմանմանը: Զեկուցողը հավելեց, որ քննարկումների արդյունքում առաջարկվում է ներքին կարգապահական կանոններում սահմանել.

- Սովորողները դպրոց պետք է հաճախեն համապատասխան հագուստով: Աղջիկները պետք է կրեն սև կտորից կիսաշրջազգեստ, որը պետք է լինի ծնկից 3-5 սանիտիմետր վերև: Ձևը՝ դասական կիսաշրջազգեստ, կիսաարև կոնաձև, առջևից երկկողմանի երկշերտ ծալքերով: Տղաները պետք է կրեն սև կտորից տաբատ: Եղանակի անբարենպաստ լինելու դեպքում և՛ աղջիկները, և՛ տղաները կարող են կրել սև կտորից կամ սև ջինսե տաբատ: Հագուստի վերևի հատվածը պետք է լինի սպիտակ, մասնավորապես, սպիտակ վերնաշապիկ կամ շապիկ, իսկ եղանակի անբարենպաստ լինելու դեպքում և՛ աղջիկները, և՛ տղաները կարող են կրել սվիտեր և այլ տաք հագուստ: Հագուստի վերևի հատվածը չի կարող լինել նկարազարդ, տաբատը չի կարող լինել ձևավոր, արտաքինից կարված գրպաններով, նկարազարդ: Հագուստի վերևի հատվածը չի կարող լինել մեծ բացվածքով: Սովորողները կարող են կրել և՛ սպորտային կոշիկներ, և՛ դասական կոշիկներ՝ համադրելով սև կտորե կիսաշրջազգեստի, սև կտորե տաբատի, ինչպես նաև սև ջինսե տաբատի (եղանակի անբարենպաստ լինելու դեպքում) հետ: Հագուստի ոչ պատշաճ կրման, ոչ սահմանված նմուշի կրման դեպքում առաջարկվում է աշակերտին ենթարկել կարգապահական տույժի՝ բանավոր նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև դասապրոցեսի ընթացքում աշակերտների կողմից ոչ ուսումնական նպատակով հեռախոսների, խելախոսների (սմարթֆոնների) կիրառմանը: Նշեց, որ առաջարկվում է դպրոցում արգելել աշակերտների կողմից ոչ ուսումնական նպատակով հեռախոսների, խելախոսների (սմարթֆոնների) օգտագործումը: Շեշտեց, որ ուսումնական նպատակով թույլատրվում է օգտագործել միայն դասագրքերում համապատասխան հանձնարարություններ կատարելու ժամանակ (QR կոդերի կիրառում և այլն): Հեռախոսները, խելախոսները (սմարթֆոնները) դպրոցում պետք է լինեն անջատված վիճակում կամ «Ինքնաթիռի» ռեժիմում: Սույն կետի խախտման համար առաջարկվում է աշակերտին ենթարկել կարգապահական տույժի՝ բանավոր նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն:

Զեկուցողն առանձին անդրադարձ կատարեց նաև դպրոցի աշխատանքային կանոնակարգին և առաջարկեց առանձին քվեարկել դպրոցի աշխատանքային ռեժիմի մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողներն առաջարկեցին փոփոխություն կատարել դպրոցի ներքին կարգապահական կանոններում և ավելացնել սահմանված հագուստի կրման և ոչ ուսումնական նպատակով հեռախոսների, խելախոսների (սմարթֆոնների) օգտագործման կետերը, իսկ դպրոցի աշխատանքային ռեժիմը թողնել անփոփոխ:

Որոշեցին՝

1) Ներքին կարգապահական կանոններում ավելացնել հետևյալ կետերը.

- Սովորողները դպրոց պետք է հաճախեն համապատասխան հագուստով: Աղջիկները պետք է կրեն սև կտորից կիսաշրջազգեստ, որը պետք է լինի ծնկից 3-5 սանիտիմետր վերև: Ձևը՝ դասական կիսաշրջազգեստ, կիսաարև կոնաձև, առջևից երկկողմանի երկշերտ ծալքերով: Տղաները պետք է կրեն սև կտորից տաբատ: Եղանակի անբարենպաստ լինելու դեպքում և՛ աղջիկները, և՛ տղաները կարող են կրել սև կտորից կամ սև ջինսե տաբատ: Հագուստի վերևի

հատվածը պետք է լինի սպիտակ, մասնավորապես, սպիտակ վերնաշապիկ կամ շապիկ, իսկ եղանակի անբարենպաստ լինելու դեպքում և՛ աղջիկները, և՛ տղաները կարող են կրել սվիտեր և այլ տաք հագուստ: Հագուստի վերևի հատվածը չի կարող լինել նկարազարդ, տաբատը չի կարող լինել ձևավոր, արտաքինից կարված գրպաններով, նկարազարդ: Հագուստի վերևի հատվածը չի կարող լինել մեծ բացվածքով: Սովորողները կարող են կրել և՛ սպորտային կոշիկներ, և՛ դասական կոշիկներ՝ համադրելով սև կտորե կիսաշրջազգեստի, սև կտորե տաբատի, ինչպես նաև սև ջինսե տաբատի (եղանակի անբարենպաստ լինելու դեպքում) հետ: Սույն կետի խախտման համար միջին դպրոցի սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն:

- դպրոցում արգելվում է աշակերտների կողմից ոչ ուսումնական նպատակով հեռախոսների, խելախոսների (սմարթֆոնների) օգտագործումը: Ուսումնական նպատակով թույլատրվում է օգտագործել միայն դասագրքերում համապատասխան հանձնարարություններ կատարելու ժամանակ՝ ուսուցչի թույլտվությամբ (QR կոդերի կիրառում և այլն): Հեռախոսները, խելախոսները (սմարթֆոնները) դպրոցում պետք է լինեն անջատված վիճակում կամ «Ինքնաթիռի» ռեժիմում: Սույն կետի խախտման համար միջին դպրոցի սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն:

Լսեցին 4. Պակաս խտությամբ չորս 4-րդ դասարան ունենալու մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց նախորդ տարիների փորձի վրա և առաջարկեց թույլատրել 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ևս ունենալ ցածր խտությամբ չորս 4-րդ դասարաններ:

Դ. Կոստանդյանը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց դպրոցի լրացուցիչ հնարավորությունները, խնայողությունները: Կոստանդյանը նաև նշեց, որ այդ հարցով դպրոցի տնօրինությանն են դիմել 4-րդ դասարանների ծնողները, ովքեր նշել են, որ նպատակահարմար են համարում շարունակել ուսուցման պրոցեսը դասարանների նախորդ տարիների խտությամբ ու առաջարկել, դասարանների քանակը թողնել անփոփոխ:

Արտահայտվեցին՝ Մ. Թոխունցը

Մայրանուշ Փոխունցը ներկայացրեց դպրոցի ֆինանսական հնարավորությունները, տնօրենի կողմից կատարված աշխատանքները, համագործակցությունները, որոնք միտված են լրացուցիչ միջոցների ձեռքբերման ու խնայողությունների ավելացմանը:

Որոշեցին՝ Հաշվի առնելով տնօրեն Դավիթ Կոստանդյանի հիմնավորումները, դպրոցի ֆինանսկան հնարավորություններն ու ծնողների առաջարկը, թույլ տալ 2023-2024 ուսումնական տարում նույնպես ունենալ ցածր խտությամբ ընդհանուր չորս 4-րդ դասարան:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«31» հոկտեմբերի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 7 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն

Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 2 անդամ

1. Ասրյան Հենրիկ
2. Աղավելյան Տաթևիկ

Նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

2. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպում:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման, օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ առաջիկայում մեկնարկում է առարկայական օլիմպիադան, շեշտեց, որ կարևոր է համարում աշակերտների հետ տարվող աշխատանքները՝ հաջորդ փուլերում հաջողություններ գրանցելու հետ կապված: Զեկուցողը նշեց, որ մեթոդական միավորումներում քննարկվել է առարկայական օլիմպիադաներին մասնակից երեխաների հետ աշխատանքի անհատական պլանների և դպրոցական փուլի կազմակերպման մասին հարցերը: Դավիթ Կոստանդյանը ներկայացրեց նաև օլիմպիադայի դպրոցական փուլի ժամանակացույցը, հանձնաժողովների, վերահսկողների կազմը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները:

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների հետ իրականացվող աշխատանքների պատշաճ իրականացումը և նշանակալի արդյունքների արձանագրումը: Նշվեց նաև տարածքային փուլին աշակերտների մասնակցության կարևորության, անհրաժեշտության մասին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման, օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպման մասին զեկուցումը:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«29» դեկտեմբերի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 9 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Հայրապետյան Արմինե
9. Պողոսյան Արմենուհի

Նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. Կառավարման խորհրդի կազմի փոփոխություն:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
3. 2023 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Կառավարման խորհրդի կազմի փոփոխության մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը նշեց, որ Սյունիքի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 28-ին N547-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել դպրոցի կառավարման խորհրդի կազմում՝ Տաթևիկ Աղավելյանին փոխարինել է Արմինե Հայրապետյանը, Հենրիկ Ասրյանին փոխարինել է Արմենուհի Պողոսյանը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոփոխությունը:

Լսեցին 3. 2023 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի աշխատողների կողմից կատարված աշխատանքները, արձանագրեց հաջողություններն ու ձեռքբերումները:
Հաշվի առնելով աշխատողների համագործակցված արդյունավետ աշխատանքը, ուսուցիչների պատրաստակամությունը՝ ուղղված դպրոցում կրթության որակի բարձրացմանը, աշխատողների հետևողական և սրտացավ վերաբերմունքը շենքային պայմանների բարելավմանը՝ Մենուա Հովսեփյանն առաջարկեց հավելավճար տրամադրել աշխատողներին՝ մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները ողջունեցին առարակը:

Որոշեցին՝ 2023 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին տրամադրել հավելավճար՝ աշխատավարձի մեկ ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«03» հունվարի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 7 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Հայրապետյան Արմինե
9. Պողոսյան Արմենուհի

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. 2024 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին:
(զեկուցող՝ Մ. Թոխունցը)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան:

Լսեցին 3. 2024 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Թոխունցը)
Զեկուցողը նշվեց, որ բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է դպրոցին հատկացնել.

- աշխատավարձ-120000,0 (մեկ հարյուր քսան միլիոն) դրամ
- ծառայությունների ձեռքբերում- 22560,0 (քսաներկու միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ

- շենք. կապ. վերանորոգում-3000,0 (երեք միլիոն) դրամ
- հիմնական միջոցների ձեռքբերում.- 900,0 (ինը հարյուր հազար) դրամ
- նախագծահետ. ծախս- 150,0 (հարյուր հիսուն հազար) դրամ

Ընդամենը՝ 146050,0 (մեկ հարյուր քառասունվեց միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ:

Արտահայտվեցին՝ Խորհրդի անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամները հավանություն տվեցին բյուջեի նախագծի նախնական տարբերակին:

Որոշեցին՝ Հավանություն տալ զեկուցողի կողմից ներկայացված 2024 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակին:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«04» ապրիլ 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 9 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Հայրապետյան Արմինե
9. Պողոսյան Արմենուհի

Նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2024թ. առաջին եռամսյակային հաշվետվության մասին հարցը:
(զեկուցող՝ Մ.Թոխունց)
3. 2023-2024 ուսումնական տարում առարկայական օլիմպիադաներում մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2024թ. առաջին եռամսյակային հաշվետվության մասին հարցը:
(զեկուցող՝ Մ.Թոխունց)
Հաշվապահը ներկայացրեց դպրոցը ֆինանսական հաշվետվությունը:
Մնացորդը առ 01.01.2024թ կազմել է 2786,4 դրամ առաջին եռամսյակի ֆինանսավորումը կազմել և 25204,7 դրամ, ծախսը՝26561,8 դրամ, որի մեջ ներառված են հետևյալ ծախսերը.
1.Աշխատավարձ-20998,4
2.Էներգետիկ ծախս- 2286,0
3.Կոմունալ ծառայություններ- 13,0
4.Կապի ծառայություն- 28,8
5.Տեղեկատվական ծառայություն- 9,3
6.Ընթացիկ վեր.ծախսեր-214,3
7.Մեք. և սարք. Նորոգում- 31,5
8.Կենց. և սննդի ծախս-2492,3
9.Այլ ծախսեր- 480,2
10.Գործուղում-8,0
Ընդամենը՝ 26561,8
Մնացորդը առ 01.04.2024թ կազմում է 1429,3

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024թ. առաջին եռամսյակային հաշվետվությունը

Լսեցին 3. 2023-2024 ուսումնական տարում առարկայական օլիմպիադաներում

մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների մասին հարցը:

(զեկուցող՝ Դ.Կոստանդյան)

Զեկուցողը նշեց,որ ավարտվել է 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլը, որի արդյունքներով դպրոցը հանրապետական փուլում կներկայացնի հինգ աշակերտ՝ «Մաթեմատիկա», «Հայոց լեզու», «ՀԵՊ» առարկաներից, իսկ գովասանագրի արժանացել են չորս աշակերտ՝ «Ֆրանսերեն», «Պատմություն», «Ռուսաց լեզու» առարկաներից:

Դպրոցը մեծ հաջողություններ է արձանագրել սպորտային մրցումների տարբեր ձևերում՝ զբաղեցնելով մրցանակային տեղեր:

Արտահայտվեցին՝ Մ. Հովսեփյանը

Արտահայտվողը կարևորեց օլիմպիականների հետ տարվող աշխատանքները, նշեց ուսուցիչների պատրաստակամության մասին: Մենուա Հովսեփյանը կարևորեց դպրոցի մասնակցության հարցը և նշեց հաջողություններ արձանագրելու կարևորության և անհրաժեշտության մասին:

Ներկաները կարևորեցին նաև օլիմպիադաների արդար և պատշաճ կազմակերպումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլի արդյունքները, կարևորեցին առարկայական օլիմպիադաների հաջորդ փուլում դպրոցի աշակերտների մասնակցությունը (կցվում է տեղեկագիրը):

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«28» հունիսի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 9 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ավանեսյան Կարո
7. Ղուլունց Վիգեն
8. Հայրապետյան Արմինե
9. Պողոսյան Արմենուհի

Նիստին մասնակցում էր դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2023-2024 ուռումնակա տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի հիմնի, տարբերանշանի, դրոշի հավանություն
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2023-2024 ուռումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները, հրապարակեց դպրոցի առաջադիմությունը և որակը, բարձր և ցածր առաջադիմություն որակ ունեցող դասարանների, գերազանցիկ, հարվածային, տարբեր մրցույթների մասնակցության, առարկայական օլիմպիադայի դպրոցական, մարզային և հանրապետական փուլերի արդյունքների մասին: Զեկուցողը անդրադարձավ նաև մեթոդմիավորումների գործունեությանը, ուսուցման գործընթացում առարկայական չափորոշչային պահանջների կատարման, որակյալ կրթության ապահովման խնդիրներին:
Ներկայացվեց արտադասարանական խմբակների գործունեությունը:

Արտահայտվեցին՝ Արմինե Հայրապետյանը, Մարգարիտա Պետրոսյանը
Արմինե Հայրապետյան. «Իմ կարծիքով, պետք է հատկապես ուշադրություն դարձնել ցածր առաջադիմություն ունեցող դասարանների ուսուցման որակն ու առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ աշխատանքներին:
Մարգարիտա Պետրոսյան. «Կարծում եմ, որ հետևողական, նպատակային գործունեության շնորհիվ կարելի է հասնել լուրջ հաջողությունների»:

Որոշեցին՝

1. Հավանություն տալ տնօրենի ներկայացրած 2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին ներկայացված հաշվետվությանը:
2. Հանձնարարել տնօրենությանը՝ հաշվետվության մեջ նշված բացթողումները շտկելու համար ձեռնարկել միջոցներ:
3. Հանձնարարել մեթոդմիավորումներին՝ դպրոցականների առարկայական օլիմպիադայի մասնակիցների կողմից առավել ակտիվ և արդյունավետ մասնակցություն ապահովել:

Լսեցին 3.

Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի հիմնի, տարբերանշանի, դրոշի հավանություն տալու մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ մայիսի 24-ին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում «Վերջին զանգը» միջոցառման մեկնարկին առաջին անգամ հնչել է Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի հիմնը, որը կատարել է դպրոցի երգչախումբը, ինչպես նաև ներկայացվել է դպրոցի տարբերանշանը, դրոշն ու դրանց խորհուրդը:

Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի համար տարբերանշանի ստեղծման հիմնական նպատակն էր՝ ունենալ դպրոցի հիշարժան, յուրօրինակ խորհրդանիշը՝ արտացոլելով նրա գործունեության կարևորագույն ոլորտներն ու առաջնահերթությունները: Այնուհետև ներկայացրեց դրանց մասին ինֆորմացիա.

«Տարբերանշանի տարրեր են ընտրվել՝ վահանը, փետուրը, երկրագունդը, պարզած ձեռքը, գլխարկը:

Դպրոցի տարբերանշանի վրա պատկերված վահանը խորհրդանշում է կրթված մարդու պաշտպանվածությունը: Նաև, ինչպես հայտնի արտահայտությունն է ասում՝ «Վահանի վրա առնել, բարձրացնել», ինչն այս դեպքում կնշանակի փառաբանել, գովաբանել, մեծարել կրթությունն ու գիտելիքը:

Վահանի վրա տեսնում ենք փետուրը, որը խորհրդանշում է ուսուցչի անխոնջ ստեղծագործ աշխատանքը:

Երկրագունդը՝ որպես մեզ շրջապատող աշխարհի մասին համապարփակ գիտելիքներ փոխանցելու ցանկության խորհրդանիշ՝ դպրոցական կյանքի հիմքը: Խորհրդանշական երկրագունդը բոլոր հիմքերի հիմքն է: Աշակերտը կունենա գիտելիք, ամուր կկանգնի Երկիր մոլորակի վրա և օգուտ կտա այն ամենին, ինչն իրեն շրջապատում է:

Գլխարկը՝ որպես կրթության նվաճումների խորհրդանիշ:

Պարզած ձեռքը՝ որպես կրթության մեջ առաջամարտիկի խորհրդանիշ:

Այս ամենը շրջանի մեջ է առնում դպրոցի անվանումը, ինչը խորհրդանշում է դպրոցի աշխատակիցների և սովորողների միասնականությունն ու համախմբվածությունը մեկ ընդհանուր գաղափարի շուրջ:

Տարբերանշանը պատկերված է սպիտակ ֆոնի վրա, ինչը խոսում է պարզության և մաքրության մասին:

Դպրոցի դրոշի համար հիմք է հանդիսացել տարբերանշանը: Դրոշի վրա առկա վերևի գիծը խորհրդանշում է պետությունը, որի հիմքն ընտանիքն է, իսկ ներքևինը՝ հենասյունը՝ կրթությունը:

Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի դրոշի, տարբերանշանի, հիմնի ստեղծումը դպրոցի կարևորագույն ձեռքբերումներից է, և դրա նպատակը մեկն է՝ դպրոցն առավել ճանաչելի դարձնել, արժևորել նրա պատմությունը և անցած ուղին, նրա որդեգրած գաղափարախոսությունն ի լուր աշխարհի հայտնել խորհրդանշական ձևով:

Դպրոցի դրոշն ու տարբերանշանը մշակվել և ստեղծվել են ուսումնական գծով տնօրենի տեղակալ Սերգեյ Ավանեսյանի կողմից:

Դպրոցի հիմնի ստեղծման գաղափարը Սերգեյ Ավանեսյանինն է: Խոսքերի հեղինակը «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Ալլա Առստամյանն է, երաժշտության հեղինակը՝ «Երաժշտություն» առարկայի ուսուցչուհի Թամարա Հովհաննիսյանը: Գործիքավորումը կատարել է Արա Ստեփանյանը»:

Զեկուցողը նշենց, որ դպրոցի երգչախմբի գեղարվեստական ղեկավարը «Երաժշտություն» առարկայի ուսուցչուհի Թամարա Հովհաննիսյանն է: Զեկուցողը ներկայացրեց նաև հիմնի բառերը, նոտագրությունը, երաժշտությունը, որոնք հասանելի են դպրոցի կայքում: Հղումը՝ http://goris3school.am/publ/2-1-0-840:

ՀԻՄՆ

Դու դպրության կանթեղ անմար,
Արևից ես կարծես սնվել,
Լուսավոր ջահը գիտության
Այս ձորերի մեջ ես վառել:
Այս ձորերի մեջ ես վառել:

Կրկներգ:
Դու սուրբ տաճար, հայոց դպրոց,
Մեզ հայ պահող ոգու ամրոց,
Նախնյաց օջախ մեր սրբազան,
Լույսի խոյանք, մտքի օրրան:
Նախնյաց օջախ մեր սրբազան,
Բախշյանական հոգու օրրան:

Կանգուն մնա դու հավիտյան,
Զանգդ հնչեղ, գիրկդ միշտ բաց,
Ակունք դարձիր դու դպրության՝
Սերունդներին գիրդ պարզած:
Սերունդներին գիրդ պարզած:

Կրկներգ:
Դու սուրբ տաճար, հայոց դպրոց,
Մեզ հայ պահող ոգու ամրոց,
Նախնյաց օջախ մեր սրբազան,
Լույսի խոյանք, մտքի օրրան:
Նախնյաց օջախ մեր սրբազան,
Բախշյանական հոգու օրրան:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհդի անդամները

Արտահայտվողները ողջունեցին նախաձեռնությունը, շեշտեցին, որ այն հերթական անգամ առանձնացնում է դպրոցը և արդարացված են այն նպատակները, որոնց համապատասխան ստեղծվել են հիմնը, տարբերանշանը, դրոշը:

Որոշեցին՝ Հավանություն տալ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի հիմնին, տարբերանշանին ու դրոշին: Հղումը՝ http://goris3school.am/publ/2-1-0-840:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Կառավարման խորհրդի արձանագրությունների ամփոփման

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում *Կառավարման խորհուրդը* գումարել է *6 հերթական նիստ*, որոնց համար կազմվել է *6 արձանագրություն:*

Կառավարման խորհուրդը նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	31.08.2023	4
2	2	31.10.2023	2
3	3	29.12.2023	3
4	4	03.01.2024	3
5	5	04.04.2024	3
6	6	28.08.2024	3

Կառավարման խորհուրդի սույն արձանագրությունների մատյանը կազմված է *14* էջից։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«28» հունիսի 2024թ.